ՀԻՆԴԻ ԳԱՂՈՒԹ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պրոֆ. ՊԱՆՉԱՆԱՆ ՍԱՀԱԿ (Կալկաթա)

Հեռավոր անցյալում Հնդկաստանը սերտ կապեր է ունեցել Հայաստանի հետ։ Դեռ II դարում (մ. թ. ա.) Հայաստանի Տարոն գավառում եկվոր հնդիկների կողմից հաստատվել էր բարգավաճ ու հարուստ մի գաղթավայր*։ Հայաստանի Իննակնյան վանքի ասորի եպիսկոպոս Զենոբ Գլակը, III դարի սկզբում (մ. թ.), իր հուշագրության մեջ հիանալիորեն և մանրամասն նկարագրում է այդ հինդի գաղթաբնակների արտաքինը, կենցաղն ու կրոնական հավատալիքները։ Այս արժեքավոր երկասիրությունը հրատարակված է 1832 թ. Իտալիայի Վենետիկ քաղաքում։ Գիրքն սկզբում գրվել է ասորերեն, իսկ ապա՝ ասորատառ հայերեն։ Վերոհիշյալ աշխատության մասին մի գրախոսական, որ պատկանում է կալկաթաբնակ հայ, Բենգալի արքայական Ասիական ընկերության անդամ Հովհաննես Ավդալյանի գրչին, լույս է տեսել 1836 թ. ընկերության ամսագրում։

Զենոբ Գլակի գրքում նշվում է, որ հեռավոր անցյալում մի քանի հինդիներ թողել են իրենց երկիրը և հաստատվել Հայաստանում։ Այստեղ Վաղարշակ թագավորը նրանց ապաստան է տալիս Տարոնի գավառում։ Մ. թ. III դարում, այն ժամանակ, երբ Զենոբը գրում էր իր հուշագրությունը, հինդի գաղթաբնակները արդեն հաստատվել էին երեք կարևոր վայրերում՝ Կուառք, Մեռտի և Հոռեան։ Սրանք էլ դառնում են հինդի կրոնի և մշակույթի կենտրոններ։ Գրքում ասված է. «Այ։ և յոյժ զարմանալի էր տեսիլ նոցա, քանզի սևք էին և գիսաւորք և զազրատեսակք, զի ցեղով ի հնդկաց էին։ Քանզի և կռոցն, որ յայս տեղոջ էին, պատճառն այս է։ Դեմետր և Գիսանէ... և կանգնեցին զկռուսն զայնոսիկ յանուն կռոցն զոր ի հնդիկսն պաշտէին» (Պատմութիւն Տարոնոյ զոր թարգմանեաց Զենոբ Ասորի, ի Վենետիկ, յամի 1832, էջ 35, 36)։

Իր հուշագրության մեջ Զենոբը գանգատվում է. «Զի ազգն այն յորժամ ի Քրիստոս դարձան, չէին կատարեալ ի հաւատսն, և զհայրենի օրէնսն կիշխէին յայտնի ունել, այլ խաբէութեամբ զայս հնարեցան. ծամ միայն թողուլ ի գլուխ մանկանցն, զի զայն տեսեալ յիշեսցեն զպաշտօն պղծութեան իւրեանց» (էջ 36)։ Գաղթողների արտաքինի, գույնի, նիստ ու կացի ու կրոնի մասին Զենոբի տված նկարագրությունը համապատասխանում է այժմյան հինդիների արտա-

---

* Հնդիկ արքայազն Դեմետր և Գիսանե եղբայրների Հայաստան գաղթելու և Տարոնում բնակություն հաստատելու ավանդությունը պահպանվել է VIII դարի հեղինակ Հովհան Տարոնացու «Պատմութիւն Տարօնոյ» երկի առաջին մասում, ուր գրանցված են Հայաստանում քրիստոնեության տարածման մասին առասպելախառն պատմություններ։ «Տարոնի պատմության» այդ մասը միջնադարյան հայ պատմագիտության մեջ վերագրված է Զենոբ Ասորի եպիսկոպոսին։ Դեմետրի և Գիսանեի Հայաստան գաղթելու ավանդության մասին գրել են Մ. Ջամչյանը, Ղ. Ալիշանը, Ղ. Ինճիճյանը, Մ. Էմինը, Մ. Աբեղյանը և ուրիշներ։ Հնդիկ պրոֆ. Պանչանան Սահան կրկին անդրադառնալով այդ ավանդությանը, փորձում է որոշել, թե Հնդկաստանի որ մասից կարող էին լինել փախստականները և երբ կարող էր կատարված լինել դեպքը (ծանոթագրությունը և հոդվածի թարգմանությունը անգլերեն բնագրից՝ Ա. Քյոչկերյանի)։

քինին ու կենցաղին։ Գիսանե աստվածը, ըստ երևույթին, պետք է համապատասխանի Kzishna Vasudeva-ին։ Դժվար է ասել, թե հինդի ո՞ր աստծու հետ է նույնանում Դեմետր աստվածը։

Հինդիների գաղթի պատճառները նշված են Զենոբի գրքում, բայց դժվար է ճշգրտել այն ժամանակաշրջանն ու ճանապարհը, որ նրանց բերել է Հայաստան։ Համենայն դեպս ակնհայտ է, որ նրանք նախքան քրիստոնեական դարաշրջանն արդեն մշտական բնակություն էին հաստատել Հայաստանում։ Վաղարշակը, որի կողմից նրանք պաշտպանություն են գտնում, գրում է Զենոբը, Արշակի թոռն էր, Արշակ մեծի եղբայրը։ Վերջինիս կողմից էլ նա նշանակվել էր Հայաստանի թագավոր, արարչագործության թվականի 3852-րդ տարում, Քրիստոսից մեկ և կես դար առաջ։

Հինդիների գաղթի պատճառների մասին Զենոբն ասում է. «Դաւ իմն խորհեալ նոցա Դինասքեայ արքային իւրեանց, զոր իրազեկ եղեալ արքային՝ առաքէ զօր զհետ նոցա, կամ սպանանել, կամ յերկրէն հալածական առնել։ Իսկ նոցա լեալ մազապուր՝ անկան առ թագաւորն Վաղարշակ և նա ետ նոցա զերկիրն Տարօնոյ իշխանութեամբ. զոր ինքեանք շինեցին քաղաք, և կոչեցին Վիշապ։ Որք եկեալ յԱշտիշատ, և կանգնեցին զկուռսն զայնոսիկ յանուն կռոցն զոր ի հնդիկսն պաշտէին» (էջ 35—36)։ Ամենայն հավանականությամբ հինդիները գաղթել են Հայաստան Մորյասների անկումից հետո։ Այդ ժամանակ Մագադայի գահը գտնվում էր Սունգասների ձեռքին, իսկ Տաքսիլայում և Հնդկաստանի հյուսիս-արևմտյան մասում իշխում էին նաև հույն թագավորներ։ Հաստատապես չգիտենք, թե որ դինաստիային էր պատկանում Դինասքեան, բայց անունից կարելի է ենթադրել, որ նա հյուսիս-արևմտյան Հնդկաստանի հույն թագավորներից մեկը պետք է լիներ։ Ստույգ չգիտենք նաև, թե որտեղից են նրանք գաղթել, բայց անուղղակի փաստերի օգնությամբ կարելի է ենթադրել, որ նրանք Հնդկաստանի հյուսիս-արևմուտքից էին։

Զենոբ Գլակը գրում է, որ սուրբ Գրիգորը մի քանի իշխաններից տեղեկացել էր, թե Տարոնի գավառում գոյություն ունեն երկու կռապաշտական մեհյաններ։ «Եթէ ի գաւառն Տարօնոյ երկուս բագինս մնացեալ են՝ որ դեռ ձօնեն դիւաց» (էջ 25)։ Հետևապես, Հայաստանի քրիստոնյաները, նոր հավատափոխներին հատուկ մոլեռանդությամբ, նպատակ են դնում կործանել մեհյանները։ Նրանք հասնում են Կուառք քաղաքը։ Հինդի քրմերը Հաշտենքի իշխանից տեղեկանալով, որ Գիսանեի ու Դիմետրի արձանները պետք է գետին տապալվեն, մեհյանները նախապատրաստվում են պաշտպանության, իսկ ամբողջ գանձը տեղափոխում թաքստոց։ Քրմապետը, որի անունը Արձան էր, և նրա Դեմետր որդին մեհյանները քրիստոնյաներից պաշտպանելու գործը վերցնում են իրենց ձեռքը։

Երեքօրյա պաշարումից հետո քրիստոնյաները տիրանում են Կուառք քաղաքին։ Պարիսպները հիմնահատակ կործանվում են ու քաղաքն ավերվում, իսկ քաղաքի բնակչությանը տանում են Մեղտի։

Հինդիների խիզախ առաջնորդ Դեմետրը ցասմամբ լի դիմում է քրիստոնյաներին. «Ոչ էպէտ մեք ձեզ յաղթել ոչ կարեմք, սակայն լաւ է այսօր մեռանել ի վերայ աստուածոցն մերոց՝ քան թէ զտաճար նոցա ի ձէնջ ապականեալ տեսանեմք, որով և զկեանս ատեցաք և զմահ սիրեցաք» (էջ 27)։

Ըստ Զենոբի պատմության՝ պաշտպանվող հինդիները սկզբում 5450 հոգի էին։ Այս թիվը սակայն ավելացել էր հասնելով մոտավորապես 7000-ի. «և էին

վեց հազար ինն հարեր քառասուն և վեց արք քրմացն, իսկ հինգ հազար և ութսուն զօրք իշխանացն հայոց» (էջ 29), գրում է հեղինակը։

Արձանը և Դեմետրը նահատակվում են։ Հերոսաբար կռվող հինդիները մնալով առանց ղեկավարի, գիմում են հաշտության։ Երկու բանակներն էլ անմիջապես կասեցնում են սպանդը։ Կենդանի մնացած «քուրմքն աղաչեցին կիշխանսն ի խաղաղութիւն, զի թաղեսցեն զմեռեալս իւրեանց» (էջ 30)։ Նրանց այս խնդրանքին հայերը սիրով ընդառաջում են։ Երկուստեք սպանվածները հավաքվում են ու թաղվում հատուկ այդ նպատակի համար պատրաստված փոսերում։

Գերեզմանների վրա կանգնեցնում են հուշարձաններ ասորի, հելլենացի և իսմայելացի նշանագրերով։

«Առաջին պատերազմ որ եղև յոյժ սաստիկ պատերազմին գլխաւոր Արձան քրմապետն որ կայ այսր ի թաղման և ընդ նմա արս հազար երեսուն և ութ, և զայս պատերազմ արարաք վասն Գիսանեայ կռոց և վասն Քրիստոսի» (էջ 31)։

Հայերը տոնում են իրենց հաղթանակը՝ մեհյանները գետնին հավասարեցնելով։ Գիսանեի և Դեմետրի արձանները, որոնք պատրաստված էին արույրից։ ջարդուփշուր են անում։ Գիսանեի արձանն ուներ 15 ոտնաչափ երկարություն, իսկ Դեմետրինը՝ 12։

Խաղաղության վերականգնումից հետո Սյունյաց իշխանը գնում է Կուառք գյուղը։ Այստեղ նրան հաջողվում է համոզել տեղի բնակիչներին հրաժարվել կռապաշտությունից և ընդունել քրիստոնեական կրոնը. «Եւ որք մկրտեցանն էին, արք և մանկտի, ոգիք հինգ հազար և յիսուն։ Եւ առեալ ածէ զնոսա ի տէրունական տաճարն, և տօն սրբոյ Կարապետին տայր կատարել որ օր մի էր նաւասարդի» (էջ 35)։ Ինչպես երևում է, կանայք մկրտվել են մի ուրիշ օր։ Ըստ ավանդության, նրանց բոլորին մկրտել է սուրբ Գրիգորը։

Չնայած իրենց վերջնական պարտությանն ու իրենց հետևորդների մասսայական կրոնափոխությանը, հինդի քրմերից մի քանիսը ընտանիքներով համառորեն պահում էին իրենց նախնիների կռապաշտական սովորույթները։ «Զայս բանս ի միտ առէք», ասում էին նրանք հայ իշխաններին, «որ թէ ապրիմք փոխարէնս առնեմք ձեզ, և թէ մեռանիմք, աստուածք հատուցանեն զվրէժս մեր» (էջ 35)։

Հայկական Տարոն գավառում իրենց հաստատվելուց մինչև այս հիշարժան կռվի թվականը, մոտավորապես 450 տարվա մի ժամանակաշրջան, հինդի գաղթականները պետք է նշանակալի չափով աճած ու բազմապատկված լինեին։ Չգիտենք, սակայն, հնարավո՞ր է արդյոք հայկական աղբյուրներում գտնել հինդի ցեղի մասին տեղեկություններ, բացառությամբ այս մեկի, որը հասել է մեզ շնորհիվ Զենոբ Գլակի Պատմության։

ИНДУССКАЯ КОЛОНИЯ В АРМЕНИИ

Проф. ПАНЧАНАН САХА (Калькутта)

(Р е з ю м е)

Во II в. н. э. в результате междоусобных войн в северо-западной Индии некоторое количество индусов переселилось в Армению и обосновало здесь, в области Тарон, индусскую колонию. В книге историка III в. Зеноба Глака «История Тарона» сохранились предания о быте и рели-

гиозных верованиях этих колонистов, а также о том, как после принятия армянами христианства они были принуждены отказаться от язычества и принять христианскую веру*.

* Сведения о переселении индусов в армянскую область Тарон сохранились в первой части «Истории Тарона» автора VIII в. Иоанна Таронаци, которая средневековыми армянскими историками неправильно приписывалась епископу Зенобу Асори. О переселении в Армению индийских колонистов писали в своих трудах армянские историки М. Чамчян, Г. Алишан, Г. Инджиджян, М. Эмин, М. Абегян и другие (примечание и перевод статьи из английского оригинала — А. Кеошкеряна).